ԺԵ·

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ· — ՌՃԲ = 1654, ԱՊՐԻԼ 15·

Զի եկն Նիկոլ առ ինքն ի հնազանդութիւն. և պատուիրէ ընդունել զնա)։

Է՛

ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց և պատրիարգ Վաղարշապատու լուսակառոյց և քրիստոսամատոյց վեհափառ և հրեշտակապար սրբոյ աթոռոյ Էջմիածնի. Ցորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան և նամակ պահպանութեան. շնորհք առաքելական և աստուածային օրհնութիւն ի վերայ տեառնապահ և քրիստոսախնամ մայրաքաղաքիդ Իլովայ, Ս· Լուսաւորչ իհարազատ որդւոց հայազուն ազանց մերոյ. մեղսաքաւիչ քահանայից, հանճարաշատ երեսփոխանաց, խորհրդաթիւ դատաւորաց, արդասապատիւ տօլմաթաւորաց, և առհասարակ ժողովրդոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Տէր, մեծամեծաց և փոքունց, միանգամայն ամենեցուն. ամէն. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, և ի Հոգւոյն Սրբոյ կենարարէ և յառատաձիր բարերարէ, և յամենազօր մարդասիրէ և ամէնունակ բաշխողէ. ամէն։ Աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած և նախախնամեալ պահեսցէ անխռով և անսասան կենաց. և զարդարեսցէ հոգւով և մարմնով, տամբք և տեղօք, զարմօք և զաւակօք, որդւովք և դստերօք, սիրելեօք և բարեկամօք, ընչիւք և ապրանօք, այգեստանօք և բուրաստանօք, հոգեկանօք և մարմնականօք. և փրկեսցէ յամենայն փորձանաց՝ յերեւելեաց և յանտեսանելեաց, մարդադէմ զազանաց, ի քարասիրտ բռնաւորաց. ամէն։

Ընդ սիրոյ աւրհնութեանս յուշ լիցի վերոյգրեալ սիրելեացդ մերոց. զի ահա այսքան տարի այդքան նեղութիւն և վիշտ որ ձեզ պատահեցաւ, թէ ի սատանայէ էր թէ ի չար մարդկանէ և թէ վասն մեղաց. այդքան նեղութիւն կրեցիք և որքան ջանացիք՝ ուստեք ելս իրաց ոչ գտէք. ոչ ի թագաւորաց, ոչ յիշխանաց, ոչ ի մէնջ, և ոչ այլ ուստեք։ Ահա ի գթութենէն Աստուծոյ եւ լեալ դիմեաց առ մեզ Նիկողայոս արքեպիսկոպոսն բազում խոնարհութեամբ, և եցոյց մեզ զկատարեալ հնազանդութիւնն իւր. և մեք վասն օգտի ձերոյ և խաղաղութեան՝ ընկալաք բազում սիրով և յոյժ մեծարանօք, որպէս վա-